# Արտաքին դրենաժի խնամքի վերաբերյալ տեղեկատվական թերթիկ

## Արտաքին խոլանգիոդրենաժի ամենօրյա խնամք

### Անհրաժեշտ պարագաներ.

- Բժշկան ձեռնոց (ոչ ստերիլ)
- Բետադինի լուծույթ
- Մանրէավերծ թանկիֆ (стерильная салфетка)
- Կպչուն ժապավեն







© irg.am 2018

# Արտաքին դրենաժի խնամքի վերաբերյալ տեղեկատվական թերթիկ

## Դրենաժի ամենօրյա վիրակապություն

Առավոտյան կամ երեկոյան ժամերին օրական մեկ անգամ կատարել **դրենաժի շրջակայքի մշակում և փոխել վիրակապը**:

Հագնել ձեռնոցները, վիրակապը հեռացնել, որից հետո դրենաժի շրջակայքը (ընդհուպ մաշկի մուտքի մոտ) կրկնակի մշակել բետադինի լուծույթով,որից հետո տեղադրել մանրէազերծ թանզիֆը (стерильная салфетка) 1 կամ 2 շերտով: Այնուհետև թանզիֆը մաշկին պետք է ամրացնել կպչուն ժապավենով:

Եթե դրենաժի մուտքի շրջանում նկատվում է **մաշկի կարմրություն** ապա վիրակապության վերջում պետք է տվյալ կարմրած հատվածը պատել լեվոմեկոլի քսուքով ( Левомеколь мазь), մինչև անցնի կարմրությունը:

© irg.am 2018

# Արտաքին դրենաժի խնամքի վերաբերյալ տեղեկատվական թերթիկ

Ապահովել դրենաժի անցանելիությունը դեպի ամրացված պարկ (**приемник**), չքաշել, չծալել խոլանգիոդրենաժը,  հետևել արտադրված լեղու քանակին, խնամքով վերաբերվել դրենաժին: Պետք է ուշադրություն դարձնել  դրենաժը մաշկին ֆիքսող թելին: Թելի կտրման դեպքում, անհրաժեշտ է դիմել բժշկին, որպեսզի դրենաժը կրկին կարվի և ֆիքսվի:

Եթե դրենաժի կողքից (մաշկի մուտքի շրջանից) նկատվում է լեղու արտահոսք, ապա պետք է կատարել խոլանգիոդրենաժի լվացումներ:

Դրենաժի լվացման համար անհրաժեշտ պարագաներ
Բժշկան ձեռնոց
ֆիզ. լուծույթ 09%-10ml
Ներարկիչ 20մլ

Կատարման տեխնիկա՝  հագնել ձեռնոցները, պարկը անջատել խոլանգիոդրենաժից, ֆիզ լուծույթով  հավաքված ներարկիչը ամրացնել դրենաժին և մխոցով  ֆիզ լուծույթը ներարկել դրենաժի մեջ՝ 2-3 անգամ: Այս գործողությունը կատարել օրը 1-2 անգամ, ըստ բժիշկի ցուցման կարելի է ավելի հաճախ:

© irg.am 2018